ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԶՀ-ԳՀԱՇՁԲ-17/2

ք. Երևան

«27» հոկտեմբերի 2017թ.

Հայաստանի զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Ա. Ավակյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Սիմոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրաֆիկական դիզայնի աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 2 947 000 (երկու միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	***ԿԱՏԱՐՈՂ***
Հայաստանի զարգացման հիմնադրամ	*«ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ*
Հասցե՝ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	*Հասցե՝ք. Երևան, Նալբանդյան 25ա, բն. 58*
Հ/հ՝ 1930040359220700 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ	*Հ/հ՝ 1570020080820100 «Ամերիաբանկ» ՓԲԸ*
ՀՎՀՀ՝02634631	*ՀՎՀՀ՝02627696*
_____ Ա.Ա. Ամալյան	*_____ Հ.Սիմոնյան*

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

Հավելված N 1
« » _____ 2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	79821160-3	**	Դրամ	2 947 000	2 947 000	1	ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 15 օրացուցային օր

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

** Կատարողը պետք է իրականացնի գրաֆիկական դիզայնի աշխատանքներ՝ Պատվիրատուի լոգոյի և բրենդբուքի նախագծման նպատակով:

Աշխատանքը բաղկացած է երկու փուլից:

1-ին փուլ.

Կատարողը պետք է ներկայացնի բրենդի անվանման յոթ տարբերակ՝ ընդգծելով դրանց առավելությունները՝ Պատվիրատուի կողմից առաջարկվածի համեմատ, ինչպես նաև՝ երեք կարգախոս: Կարգախոսները պետք է մշակվեն՝ համաձայն Պատվիրատուի նկատառումների, և Պատվիրատուն պետք է ընտրի մշակված տարբերակներից մեկը:

Մինչև անվանումները Պատվիրատուին ներկայացնելը պետք է ստուգված լինի դրանցով ապրանքային նշանի գրանցելու հնարավորությունը, ինչպես նաև համապատասխան URL հասցեի հասանելիությունը՝ com, org, uk, ru և am տիրույթներում:

Անվանման հասանելիությունը, գրավոր և հնչյունային արտասանությամբ և ապրանքային նշանի վերաբերյալ այլ տարրերով, պետք է ստուգված լինի հետևյալ երկրների ռեգիստրներում ԱՄՆ, Կանադա, Ավստրիա, Բելգիա, Հոլանդիա, Բուլղարիա, Չեխիա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունգարիա, Իտալիա, Լեհաստան, Իսպանիա, Միացյալ Թագավորություն, Ճապոնիա, Ռուսաստան, Չինաստան և Հայաստան:

Ըստ Պատվիրատուի պահանջի՝ անվանումների հասանելիության ստուգում կարող է իրականացվել նաև այլ պետությունների ռեգիստրներում:

Կատարողը պետք է իրականացնի անվան վերջնական տարբերակի լեզվաբանական/մշակութային վերլուծություն, մասնավորապես՝

1. Լեզվաբանական վերլուծության ենթարկել անվան վերջնական տարբերակը՝ ստուգելով դրա բացասական կամ դրական կոնոտացիան (երկիմաստությունը)՝ ներառյալ ժառգոնը, առօրյա խոսակցական ոճի արտահայտությունները և արտասանության խնդիրները հետևյալ լեզուներում՝ հայերեն, անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն, գերմաներեն, չինարեն, ռուսերեն, իսպաներեն.
2. Գնահատել անվանման արտասանությունը առ այն, թե ինչպես է այն հնչում օտար լեզուներում, և ինչ գեղագիտական արձագանք ունի դրա արտաբերումը, հավանական ուղղագրական խնդիրները, արտերկրացիների համար դրա արտասանության բարդությունը կամ դյուրությունը.
3. Վերլուծել անվանման մշակութային ընկալումը՝ դրանում դրանում կիրառում գտած գույների, թվանշանների, ամսաթվերի մշակութային նշանակությունը և այն:

Անվանման վերջնական հաստատումից հետո Կատարողը պետք է նախագծի Պատվիրատուի լոգոն, տրամադրի լոգոյի օգտագործման ուղեցույցը, որը պետք է պարունակի լոգոյի կիրառման բոլոր պայմանները, ուղղությունները, թույլատրելի և ոչ թույլատրելի գործածման եղանակները՝ ներառյալ գովազդային հարթակներում օգտագործման պայմանները, ընդունելի և ոչ ընդունելի գունային բոլոր տարբերակները:

Կատարողը պետք է ներկայացնի առաջարկվող լոգոյի հինգ տարբերակ, որոնցից Պատվիրատուն կընտրի երեքը: Կատարողը ընտրված տարբերակների վերաբերյալ Պատվիրատուի նկատառումների համաձայն պետք է կատարի համապատասխան փոփոխություններ: Այնուհետև Կատարողը պետք է ներկայացնի մշակված երեք տարբերակները, որից Պատվիրատուն կընտրի մեկը: Կատարողը ընտրված տարբերակի վերաբերյալ Պատվիրատուի նկատառումների համաձայն պետք է կատարի վերջնամշակման աշխատանքներ, որը պետք է հաստատվի Պատվիրատուի կողմից:

Կատարողը պետք է ներկայացնի լոգոյի ամբողջական գունային պալետը՝ հիմնական գույներ և հավելյալ գույներ, և ֆոնտային ամբողջական փաթեթը՝ ֆոնտային գամմա, հիմնական ֆոնտեր, հավելյալ ֆոնտեր, ինչպես նաև լոգոյի սև ու սպիտակ տարբերակը:

Լոգոյի վերջնական տարբերակը Կատարողը պետք է հանձնի Պատվիրատուին կրիչի միջոցով վեկտոր տարբերակով՝ Illustrator կամ InDesign ծրագրերով: Գունային համակարգը՝ CMYK, PANTONE, RGB: Սև գույնը՝ 1 գույնով: Տեքստերը պետք է լինեն կոտրած: Գունային բոլոր կոդերը և ֆոնտերի անվանումները պետք է տրամադրվեն բրենդբուքում:

2-րդ փուլ.

Լոգոյի և ուղեցույցի վերջնական հաստատումից հետո Կատարողը պետք է մշակի Պատվիրատուի բրենդբուքի ատրիբուտները, որոնք ներկայացված են ստորև, ինչպես նաև տրամադրի լոգոն վեկտոր տարբերակով տարբեր չափերով՝ ստորև ներկայացվող ոլորտներին համապատասխան.

1. Աշխատանքային փաստաթղթեր
   - 1.1. Բլանկ
   - 1.2. Նամակ
   - 1.3. Հրաման
   - 1.4. Անցաքարտ
   - 1.5. Այցեքարտ
   - 1.6. Օրագիր
   - 1.7. Նոթատետր
   - 1.8. Թղթապանակ
   - 1.9. Ծրար dl (220h110 mm)
   - 1.10. Ծրար c5 (229h162 mm)
   - 1.11. Ծրար c4 (324h229 mm)
   - 1.12. Թղթապանակներ PVC
   - 1.13. Նամակի օրինակ Word ֆորմատով
   - 1.14. Պրես ռելիզի օրինակ Word ֆորմատով
   - 1.15. Նամակի օրինակ MS OUTLOOK ծրագրում
   - 1.16. Կորպորատիվ բեյջ
2. Գովազդային և առաջխաղացման նյութեր
   - 2.1. Գովազդային վահանակի օրինակ/ադապտացիա/
   - 2.2. Ուղղահայաց ձևաչափ. Մոդուլային ցանց և դիզայնի սկզբունքները
   - 2.3. Հորիզոնական ձևաչափ. Մոդուլային ցանց և դիզայնի սկզբունքները
   - 2.4. Արտաքին գովազդ՝ բիլբորդ 6մx3մ
   - 2.5. Ինտերներտային նկարների բաներ (հիմնական ինտերնետային ձևափաչերը)
   - 2.6. Ինտերնետային պրոդուկտների բաներ (հիմնական ինտերնետային ձևափաչերը)
3. Կորպորատիվ բրենդինգ
   - 3.1. Կորպորատիվ տպագրության ստեղծման ուղեցույց
   - 3.2. Երկկողմանի թռուցիկ A4
   - 3.3. Բուկլետներ A4, A3
   - 3.4. Ֆլայեր A4
   - 3.5. Կատալոգ

3.6. Շնորհավորական բացիկ
3.7. Հրավիրատոմս
3.8. Օրացույց՝ սեղանի, պատի
3.9. Ներկայացուցչական ֆայլեր (MS PowerPoint պրեզենտացիայի օրինակ)
3.10. Գրասենյակային պոստեր
3.11. Գրասենյակի ներքին բրենդինգ

4. Հուշանվերներ
4.1. Գրիչ
4.2. Գավաթ
4.3. Սեղանի դրոշ
4.4. Պատի ժամացույց

Կատարողը պետք է ներկայացնի առաջարկվող նյութերի երեք տարբերակ, որից Պատվիրատուն կընտրի մեկը, և Պատվիրատուի նկատառումների հիման վրա իրականացնի փոփոխություններ: Վերջնական տարբերակը պետք է հաստատվի Պատվիրատուի կողմից:

Վերոնշյալ նյութերը պետք է ներկայացվեն ինչպես մոք-ափ տարբերակով, այնպես էլ տպագրման ենթակա տարբերակով:

Նյութերի վերջնական տարբերակը Կատարողը պետք է հանձնի Պատվիրատուին կրիչի միջոցով վեկտոր տարբերակով՝ Illustrator կամ InDesign ծրագրերով: Գունային համակարգը՝ CMYK, PANTONE, RGB: Սև գույնը՝ 1 գույնով: Տեքստերը պետք է լինեն կոտրած: Գունային բոլոր կոդերը և ֆոնտերի անվանումները պետք է տրամադրվեն բրենդբուքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	***ԿԱՏԱՐՈՂ***
Հայաստանի զարգացման հիմնադրամ	*«ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ*
Հասցե՝ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	*Հասցե՝ք. Երևան, Նալբանդյան 25ա, բն. 58*
Հ/հ՝ 1930040359220700 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ	*Հ/հ՝ 1570020080820100 «Ամերիաբանկ» ՓԲԸ*
ՀՎՀՀ՝02634631	*ՀՎՀՀ՝02627696*
Ա.Ա. Ավակյան	*Հ.Սիմոնյան*

Հավելված N 2
« »_____ 2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	79821160-3	Գրաֆիկական դիզայնի աշխատանքներ	...	...	...	...	...	...	...	...	2 947 000	2 947 000	2 947 000	2 947 000	2 947 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի զարգացման հիմնադրամ

Հասցե՝ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Հ/հ՝ 193004359220700 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝02634631

_____ *Ա. Ավակյան*

ԿԱՏԱՐՈՂ

«ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ

Հասցե՝ք. Երևան, Նալբանդյան 25ա, բն. 58

Հ/հ՝ 157002008082010 0 «Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝02627696

_____ *Հ. Սիմոնյան*

Հավելված 3
« »_____ 2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄ	***ՊԱՏՎԻՐԱՏՈՒ***
«ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ	*Հայաստանի զարգացման հիմնադրամ*
Հասցե՝ք. Երևան, Նալբանդյան 25ա, բն. 58	*Հասցե՝ք. Երևան, Մ. Մկրտչյան 5*
Հ/հ՝ 1570020080820100 • Ամերիաբանկ• ՓԲԸ	*Հ/հ՝ 1930040359220700 • Կոնվերս Բանկ• ՓԲԸ*
ՀՎՀՀ՝02627696	*ՀՎՀՀ՝02634631*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 20 թ. դուրսգրված N հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները կամ կատարել է հետևյալ աշխատանքները կամ մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ-ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« »_____ 2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 10
«ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-17/2» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «02» հոկտեմբերի 2017թ.*

Դոպինգ ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Սիմոնյան Հայկ AN0748519, տրված 10.12.2013-ին 010–ի կողմից
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ :

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Դոպինգ ՍՊԸ
ընկերության անվանումը

Նալբանդյան 25ա, բն 58
ընկերության հասցեն

Ամերիաբանկ ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

1570020080820100
ընկերության բանկային հաշվեհամարը

02627696
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Հայկ Սիմոնյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

** լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ Դոպինգ ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 1570020080820100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 02627696

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Հայաստանի զարգացման հիմնադրամ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02634631

10. Շահառուի բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 1930040359220700

12. Գումարը թվերով և բառերով՝ 294.700 Երկու հարյուր ինևնսունչորս հազար յոթ հարյուր

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ Տուժանք՝ մասնակցության հայտի ապահովում

15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԶՀ-ԳՀԱՇՁԲ-17/2

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*